



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ



« 09 » 03 2020թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000022

Ձեռնարկողը՝

«Գոգ Արս» ՍՊԸ

Գեղարքունիքի մարզ, Լճաշեն համայնք

Գործունեությունը՝

Լճաշենի բազալտի հանքավայրի հարավ-արևմտյան
տեղամասում 2019-2020թթ. կատարվելիք երկրաբանական
ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի
վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Գեղարքունիքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պաշտոնակատար՝



Ա. Դոնոյան

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 000022

« 09 » « 03 » 2020թ.

Լճաշենի բազալտի հանքավայրի հարավ-արևմտյան տեղամասում 2019-2020 թթ. կատարվելիք երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ներածական մաս.

Ձեռնարկող՝

«Գոգ Արս» ՍՊԸ

Ներկայացված նյութեր՝

Շրջակա միջավայրի վրա ազդեցության
նախնական գնահատման հայտ և կից
փաստաթղթեր /Գ կատեգորիա/

Գտնվելու վայրը՝

Գեղարքունիքի մարզի Լճաշեն համայնք

Գեղարքունիքի մարզի Լճաշենի բազալտի հանքավայրի հարավ-արևմտյան տեղամասի 2.63հա տարածքում, նախատեսվում է իրականացնել օգտակար հանածոյի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ: Երևակման տարածքը ներկայացված է գյուղատնտեսական նշանակության այլ հողերով:

Լճաշենի բազալտի հանքավայրի հարավ-արևմտյան տեղամասը, վարչական տեսակետից, գտնվում է Գեղարքունիքի մարզում, Լճաշեն գյուղի վարչական տարածքում՝ Լճաշեն գյուղից 1.8կմ դեպի հարավ-արևմուտք:

Մոտակա բնակավայրերն են Լճաշեն, Չկալովկա, Գեղամասար, Ցամաքաբերդ, Վարսեր գյուղերը և Սևան քաղաքը:

Նկարագրական մաս. Ընկերության նպատակն է ուսումնասիրել տեղամասի բազալտները և տալ դրանց արդյունաբերական գնահատականը՝ որպես երեսապատման և շինարարական քարի արտադրության հումք, որոնք կբավարարեն 9479-98 ԳՈՍՏ-ի և «Շինարարական քարեր տուֆերից, բազալտներից և տրավերտիններից» 100-94 ՀՍ ԳՈՍՏ-ի տեխնիկական պահանջները, իսկ արտադրական թափոնները օգտագործել որպես շինարարական խճի և ավազի հումք, որոնք կհամապատասխանեն «Խիճ և կոպիճ խիտ լուծարվող մեծանիւթներից շինարարական աշխատանքների համար 8267-95 և «Ավազ շինարարական աշխատանքների



համար» 8736-2014 ՀՍ ԳՕՍՏ-երի տեխնիկական պահանջներին: Հետախուզվող տեղամասի ծայրակետային կոորդինատները ARM WGS-84 կոորդինատային համակարգով բերվում է ստորև.

Y =8493501	X =4485010	Y =8493569	X =4485198
Y =8493521	X =4485045	Y =8493563	X =4485174
Y =8493527	X =4485062	Y =8493628	X =4485138
Y =8493531	X =4485099	Y =8493625	X =4485104
Y =8493527	X =4485143	Y =8493695	X =4485099
Y =8493527	X =4485164	Y =8493723	X =4485077
Y =8493535	X =4485204	Y =8493644	X =4484975
		Y =8493617	X =4484981

Նախագծով նախատեսվում են 1:1000 մասշտաբի երկրաբանահանույթային աշխատանքներ, մեխանիկական սյունակային հորատում, նմուշարկում, փորձնական հանույթ ռադիոմետրական և ինժեներա-հիդրոերկրաբանական ուսումնասիրություններ:

Հորատման աշխատանքները կիրականացվեն սյունակային հորատման ուղղաձիգ հորատանցքերի հորատման միջոցով: Հորատումը կկատարվի կարծր համաձուլվածքային թագիկներով՝ 132-112 մմ տրամագծով:

Նախատեսվում է հորատել 10-15 մետր խորության 4 հորատանցքեր՝ 50 մետր ընդհանուր ծավալով, հորատահանուկի նվազագույն ելքը՝ 80%:

Նախատեսվում է 1-ին խմբի 4 հորատանցքերի հորատում ՈՒՐԲ 2.5 Ա տիպի ինքնագնաց հաստոցով: Նախագծով նախատեսվում է անցնել 3 հետախուզահոր՝ յուրաքանչյուրը 4.5մ խորությամբ, մակերեսը՝ 2.4մ²: Ընդհանուր ծավալը կկազմի 32.4մ³/13.5գծ.մ/:

Լեռնային զանգվածից պիտանի բլոկների ելքի տոկոսի որոշման համար նախատեսվում է երևակման սահմաններում փորձնական բացահանքի անցում՝ 25x4x3=300մ³ ծավալով, որից 100մ³ դեյուվիալ առաջացումներից ու հողմնահարված ապարներից և 200մ³ չհողմնահարված, թարմ ապարներից: Վերջիններից կկատարվի փորձնական հանույթ պիտանի բլոկների ելքի որոշման համար: Փորձնական հանույթի ընդհանուր ծավալը կկազմի 200մ³: Այս աշխատանքները կկատարվեն մեխանիկական հարատասեպային եղանակով՝ օգտագործելով բուլդոզեր և էքսկավատոր:

Մանրամասն երկրաբանական փաստագրման ենթակա են հորատանցքերի հորատահանուկը, բնական մերկացումներն ու փորձնական բացահանքը:

Երկրաբանական փաստագրման աշխատանքները նախատեսվում են կատարվել 1:100 մասշտաբով: Դրանց ծավալները հետևյալն են ըստ տեսակների.

- հորատահանուկի փաստագրում – 50 մ,
- բնական մերկացումներ – 45մ,
- փորձնական բացահանք – 25մ,
- ընդամենը – 120մ:

Նմուշարկումն իրականացվելու է հորատանցքերի հորատահանուկից, բացահանքից և բնական մերկացումներից: Օգտակար հանածոյի ֆիզիկամեխանիկական հատկությունները որոշելու նպատակով նախատեսվում է.

– Հորատանցքերից առաջինը կնմուշարկվի անընդհատ տիրույթներով, մնացածը ընդհատվող: Հորատահանուկի նմուշների սեկցիայի երկարությունը կտատանվի 4մ սահմաններում: Հանուկային նմուշների ընդհանուր քանակը կկազմի 10 նմուշ 85% հանուկի



ՀՀ ԲՐԱԾԱՆԿԱԿԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ԿՈՄԻՏԵ

պարտադիր զինված է լինելու շարժական հրդեհաշիջման սարքավորումով, ինչպես նաև մեքենայի վրա տեղադրվելու է զգուշացնող ազդանշան:

-Օգտագործված յուղերի ու քսայուղերի հավաքում առանձին տարրաների մեջ՝ հետագա ուտիլիզացման կամ երկրորդական վերամշակման համար:

-Հնամաշ դետալների ու մասերի հավաքում և հանձնվում որպես մետաղական ջարդոն:

-Կենցաղային աղբի հավաքում մինչև 50լ տարողությամբ տոպրակների մեջ, տեղափոխվում մոտակա աղբահավաք կետեր:

-Մեքենաների և սարքավորումների գործածություն սարքին վիճակում՝ գերնորմատիվ արատաետումները բացառելու նպատակով:

-«Թաց հորատման» իրականացում:

-Կեղտաջրերի հավաքում հորատիպ զուգարանում, որը հետագայում դատարկում է հատուկ ծառայության ուժերով:

-Հողի բերրի շերտի հանում և պահպանում հետախուզական մակերևութային փորվածքների և հորատման հարթակների անմիջական հարևանությամբ : Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ավարտից հետո՝ խախտված տարածքների ռեկուլտիվացիա, փխրեցում, պարարտացում բնական պարարտանյութերով և գրունտի խոնավեցում՝ բուսականության բնական վերածը խթանելու նպատակով: Տարածքին բնորոշ բուսատեսակների օգտագործում ռեկուլտիվացիոն աշխատանքների ժամանակ:

-Ընդերքօգտագործման թափոնների կառավարում :

Լճաշենի բազալտի հարավ-արևմտյան տեղամասի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում «Գոգ Արս» ՍՊ ընկերությունն իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման և մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

- Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի մոնիթորինգ պարբերական չափումներ՝երկրաբանական ուսումնասիրության ընթացքում յուրաքանչյուր շաբաթը մեկ անգամ:

- Լեռնատրանսպորտային սարքավորումների աշխատանքային վիճակի՝ մասնավորապես չեզոքացուցիչ սարքավորումների սարքին վիճակի պարբերական մշտադիտարկումներ, տարին մեկ անգամ հաճախականությամբ:

- Ռեկուլտիվացված տարածքների ակնադիտական ուսումնասիրություն՝ հողերում բուսականության բնական վերածի արդյունավետության գնահատման նպատակով

Ջրային ավազանի աղտոտում տեղի չի ունենա, քանի որ տարածքում գրունտային ջրերը բացակայում են, իսկ լեռնային աշխատանքների տեխնոլոգիայով արտահոսքեր չեն նախատեսվում:

Պատճառաբանական մաս. Երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման ընթացքում հնարավոր ազդեցությունը շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչների վրա թույլատրելի նորմայի սահմաններում է:

Լճաշեն համայնքում օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակայնությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեությանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են ՀՀԳԱԱ Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովը և շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները: Փորձաքննական գործընթացում նախագիծը վերադարձվել է լրակազմման, հաշվի են առնվել ներկայացված դիտողություններն ու առաջարկությունները:



Փորձաքննական պահանջներ

- Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում պարբերաբար իրականացնել հողի, օդի, մոնիթորինգ, արդյունքները ներառել մոնիթորինգի պլաններում:
- ռեկուլտիվացիոն աշխատանքների արդյունքում բացառել հողաթմբերի կուտակումները և խախտված տարածքների առկայությունը:
- Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման ընթացքում, անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտում ամրագրված բնապահպանական միջոցառումների իրականացմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ապահովելով բնապահպանական բոլոր նորմերը:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Գոգ Արս» ՍՊԸ կողմից ներկայացված Գեղարքունիքի մարզի Լճաշենի բազալտի հանքավայրի հարավ-արևմտյան տեղամասում 2019-2020թթ. կատարվելիք երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պատկանող կատարման պայմանով:

Մասնագետ



Հ. Մեսրոպյան